

ԲԱԺԱՆՈ՞՞՞ ԱԳՐՈՒԹԻՒՆ
Պոչխարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի հա-
մար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 ֆր.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆՏՈՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

Ծանուցում տողը տողին
հրեային համար 40 սանթիմ
ե. իսկ վերջին հրեային հա-
մար 20 սանթիմ հ. երեք հե
աւելի սանթիմերու համար
20 Օլլ զեղջ կըլլայ:

Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐՋՈՒՄ

R. P. Kalemcarian, Mechitharistengasse W. 4
(Autriche) Vienne ou journal
«Шаржумъ» Varna (Bulgarie)

Նամակ եւ դրամ դրկիչ
Խմբագրութեան հասցիի

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Vienne ou journal
«Шаржумъ»
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ չին սրտի

Արտասահմանի ձեռք
(20 ՍԱՆԹԻՄ)

Պոչխարիոյ համար ձեռք
(15 ՍԱՆԹԻՄ)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿԱՌԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Ս. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

Դիլաւոր գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇՇ-
ԽԱՒՈՐԵԱԼ ԱՕՅԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱ-
ԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ:

Տոմսակ գնել փոփոգողները կրնան
իրեն գիտել:

Ձար-Պորիս փողոց Վառնա

ՆՈՐԷՆ ԱՂՔԱՏՆԵՐԸ

Յիշիւցէի Աղքատախնամին զբր-
կած մէկ հաշուեցողակը, զոր
յաջորդ թիւին մէջ հրատարակ-
ուած պիտի տեսնէ ընթերցողը,
ինծի առիթ կուտայ կարգ մը
խորհրդածութիւններ ընել Վառ-
նայի ազգայիններուն թոյլ ան-
հոգութեան մասին:

Չորս հինգ տարիէ ի վեր Յի-
շիւցէի Աղքատախնամին ունի:
Շատ մը հաստատութիւններ
ծնունդ առին, փայլեցան, մա-
րեցան. կարիք բռնուեցան, երկ-
պառակեցան հոն. բայց Աղքա-
տախնամը, միակ մարմինը մնաց
որ անվհատ ու յամառ աշխատու-
թեամբ, տքնութիւնով, յարա-
տեւութեամբ, զոհողութիւննե-
րով, կարողացաւ տոկալ բոլոր
վերահաս տագնապներուն, զինքը
ստեղծող մարմնէն՝ Թագ. Խոր-
հուրդէն ալ աւելի կանոնաւորու-
թեամբ շարունակել իր գործը,
և պահպան հրեշտակի պէս օգ-
նութեան հասնիլ ցուրտ ձմեռին
անպատշապ մնացած գաղթակա-
նին, կամ օտարութեան մէջ ա-
մէն միջոցներէ զուրկ թշուառ
ճամբորդին:

Բազմին կոյր կամքէն թշուա-
ռացած հայը, երբ Յիշիւցէի իյ-
նայ, կրնայ մտածել ըլլալ թէ
անմիջապէս երեսի վրայ չի պիտի
մնայ: Բաւական է որ իր անկեալ
վիճակի մասին համոզիչ փաստեր
ունենայ և իսկոյն համակրելի,
անկեղծ, ժրաջան ու վառվռուն
երիտասարդներու խումբ մը պիտի
չըջապատէ զինքը, պիտի քննէ,
փնտռէ իր պաշտպանութիւնը
խնդրող անձին պայմանները և

պիտի փութայ իր պարտքը կա-
տարել: Աղաջական քմայքը եր-
բեք այդ երիտասարդներու գոր-
ծառնութեանց մէջ գիտ չէ կըր-
ցած բոյն դնել: Չեւակերպու-
թիւնները գործ չունին հոն բնաւ.
կը տեսնեն իրողութիւնները, ի-
րենց խղճին ձայնը կը յիշեցնէ
անոնց իրենց պարտքը, և իս-
կոյն որոշումը տուած են: Այս
պատճառաւ ալ Յիշիւցէի Աղքա-
տախնամը տեղւոյն բոլոր հասա-
րակութեան սիրուած մարմին
մըն է, ամէնքն ալ հասկցած են
անոր կարեւորութիւնը, կը պա-
հեն զայն, կ'օժանդակեն անոր,
և անտարակոյս ամենալաւ գործ
մըն է իրենց ըրածը:

Կիրակի օր մը, ժամը տասնին
կամ տասնըմէկին տեսնենք վեր
ելէք, եթէ կուզէք, մեր գպրո-
ցին դրան սանգուխներէն՝ Խաղ-
խորհրդարան մտնելու համար:
Անպայման դրան առջեւ շարուած
պիտի տեսնէք չորս հինգ մար-
դիկ, ամէն մէկը նիհար, դեպքե-
զին երեսի գոյնով, փոսացած ու
մարած աչքերով, զողողուն
ծունդերով, ձեռքին երակները
դուրս ցոյցած ու կծկուած,
կմախք մը կամ ուրուական մը՝ որ
ձեզի պիտի հասցնէ թէ երեք
չորս շաբաթէ ի վեր, ամէն կի-
րակի օր, ժամերով կուգայ սպա-
սելու այդ դրան տակ, ճամբու-
ծախք մը առնելու կամ քաղա-
քային հիւանդանոց մտնելու դիւ-
րութիւն մը խնդրելու համար:
Բայց մարդ չի կայ երեսը նաղոյ,
ամէն կիրակի գլուխը ձուած կը
ստիպուի ես դառնալ «սպասէ»,
բան մը կընենք» տխուր բանա-
ձեւը լսելով իր բոլոր աղաչանք
ու պաղատանքներուն փոխարէն:
Ինչո՞ւ այս դատապարտելի
անարտութիւնը, ի՞նչու մենք
մեր աղքատներուն վիճակով չի
հետաքրքրուինք ու թողունք որ
փողոցներու անկիւնը հոգի տան
անոնք: Ամօթ չէ՞ մեզ ամբողջիս
համար:

Անշուշտ թաղական խորհուրդը
մանաւանդ իր ներկայ վիճակին

մէջ, չի կրնար այդ ամէնուն տլ
հասնիլ: Բայց թագ. խորհուրդը
կրնար իրեն օժանդակ Աղքատա-
խնամ մարմին մը ընտրել և
անոնց յանձնել աղքատներու հո-
գը, որով թէ՛ ինք պատաս-
կըլլար իրեն համար իսկապէս
ճանր բռնէ մը և թէ՛, միւս կող-
մէ, աղքատներուն նպաստաւոր
կարգադրութիւն մը ըրած կըլ-
լար, որոնք իրենց առջեւ ան-
շատ մարմին մը պիտի ունենա-
յին լոկ այդ նպատակով կազ-
մակերպուած:

Թող չառարկուի թէ Վառնա
ժամանակին աւելի հսկայ աղքա-
տախնամներ ունեցած է, բայց
չէ կրցած յարատեւել և քայ-
քայուած է աւելի քան տխուր
ոլբերգութիւն մը հիւսելով: Չէ,
ատիկայ չի կրնար պատճառ մը
նկատուիլ նոր Աղքատախնամի
մը կազմութեան: Միայն պէտք է
զայն կազմող մարմինն անդամ-
ներու ընտրութիւնն ընել գիտ-
նալ ու զայն ձգել որ ապատրէն,
անկախորէն գործէ, բնականա-
բար ամէն եռամսեայի կամ վեց-
ամսեայի իբ գործառնութեանց
համարատուութիւնը պահանջելով:
Թող անիկա միջոցներ ստեղծէ,
գանձանակ շրջապայեցնել տայ
հասարակութեան մէջ, տոներու
առթիւ նուիրատուութիւն հաւա-
քէ է իր գոյացուցած հասոյթները
կարելի եղածին չափ ճշգիւ ու
անաչառութեամբ իր նպատակին
գործածէ: Ահա Յիշիւցէի աղքա-
տախնամը որ հինգ ամսուան մէջ
840 ֆր. հասոյթ մը ունեցած է,
որուն 730ը աղքատներու վրայ
ծախսած է, որ կընշանակէ ամսա-
կան 120 ֆր. նպաստ մը: Միթէ
քի՞չ թշուառութիւններ կարելի
պիտի ըլլար ամօքել Վառնայի
մէջ, ամուսկան 120 ֆրանքով,
եթէ աղքատախնամ մը ունենա-
յինք, որ աւելի մեծ հասոյթ մը
պիտի ունենար, քանի որ Վառ-
նա ամէն քաղաքէ աւելի վարժ-
ուած է տալու:

Յառաջիկայ ձմրան համար գոնէ
փոփոխելի է որ Վառնան ալ իր
Աղքատախնամը ունենայ: Տա-
քուկ սենեակներու մէջ փութած
մեր քէյֆով հրճուելու ատեն,

թշուառութեանց վրայ կոխկրո-
տելով անցնելու քարտու թիւնը
չունենանք, և ստոր համար՝ այժ-
մէն իսկ պատրաստութիւններ
տեսնենք:

ՇԱՂԱՊ

Յ. Գ. — Այս վայրկեանիս ստա-
ցայ նաեւ Ռուսոնոգի Աղքատա-
խնամին հաշուեցուցակը, որ 1600
ֆրանքի նպաստ մը տուած ըլլալ
կը ցուցնէ ութը ամսուան մէջ:

ՃԱՄՐՈՒ ՆՕԹԵՐ

Շոգեկառքը վերջին անգամ կը
սուլէ, ու՛շ վերջին անգամ քարովը կը-
սեմ բարեկամներու, որոնք կայա-
բան եկած են ողջերդ մաղթելու: Ե-
րեք բարեկամներ կարեկերանան ինծի
մինչեւ առաջին կայարանը, երկ-
րորդ բաժանում մը ու Յիշիւցէն առ
յաւէ կը հեռանայ:

Կը կծկուիմ անկիւն մը, գլուխս
կը ծրարեմ երկու ձեռքերուս մէջ,
ու առանց ուշադրութիւն ըն-
ծայելու ուղեկիցներու յարուցած
խժղուկին, կընկղմուիմ ցլեղը բա-
ժանումի մը հետեւաք եղող թաղ-
ձու թեան մը մէջ:

Մտածումներ խառնակ ու ալազան
զիրար կը հրճուեն գանկիս մէջ. ի-
շատակներ թարմ, թարմ անուշ ու
տխուր կը կծկեն սիրտս:

Հինգ տարիէ Պուլկարիոյ մէկ ծայ-
րէն միւսը կը թափառիք քանի մը
ընկերներով. այն ասպարէզը ուր
նետուած ենք գործելու, իրաւ գա-
ղափարական ու վեհ, բայց լեցուն է
փուշերով ու խութիւնով: Հին ըն-
բանումներ, կիսատ սխալ հակացո-
ղութիւններ, չիլ նայուածքներ, սեւ
օրերէն մնացած բուրբեր ու բրածոյ
ղէմքեր ոչինչ չեն խնայեր ամէն ինչ
դժուարացնելու մեր շուրջը, մեր
թափը կեցնելու ու մեր սկսած գործը
կիսկատար թողուլ: Ու հազիւ տեղ
մը ընտելացած, հազիւ տաքուկ ու
սիրուն շրջանակ մը կազմած, կը
ստիպուինք թողուլ ամէն ինչ ու
երթալ ուրիշ անկիւն մը, ու այս-
պէս հինգ տարիներ ամբողջ թափա-
ռեցանք Ռուսոնոգ, Վառնա, Յի-
շիւցէ:

Յիշիւցէ, երկու տարի ասպրեցայ
հոն, նոր բարեկամներ աւելցան ու
հիներ պակսեցան, երազի չափ լայն
ծրագիրներ յորինեցինք, խօսեցանք,
գրեցինք, վիճեցինք ու երգեցինք,
ու երբ դեռ շատ բան կար ընելիք,
կըստիպուիմ թողուլ ամէն ինչ, գործ,
բարեկամ ու մինչեւ անգամ ան. եւ

ժամեայ քարտուղար Կառնիկ Հայկեանի :

— Եւսմարի թաղականները էջմիածնէն արտօնութիւն ուզած ըլլալով Տ. Խորէն քահանային ծաղկէ փիւրոն կրելու, Ս. հայրապետը Պատրիարքարանի գիւմաստի տեղեկութիւն առնելու համար, կրօն. ժողովը Եւսմարցիներուն այս խնդիրը տարածած գտած ու մերժած է :

— Մուշէն «Իրեւելք»-ի կը գրեն թէ Ս. Յովհաննու վանքին մէջ պատասպարուած 30 որբերուն 12ին պաշտպանութիւնը պատրիարքարանը իր վրայ առած է, նկատելով որ, մինչեւ հիմա այդ վանքը իրեն յանձնուած որբերը պատասպարած է առանց արտաքին օգնութեան :

Պատրիարքարանը ամսական օժուկի պիտի վճարէ ատոնց համար : Մատաթիւս Վ. հոն պիտի երթայ որբանոցի մասին կարեւոր կարգադրութիւններ ընելու, և առաջին գործը պիտի ըլլայ նոր որբեր ընդունել անոնց փոխարէն, որոնք գժգոհ ըլլալով Զատիկին ձգած հեռացած էին : Ատոնց թիւը 12ի կը հասնի :

ԱԶԱՏ ԲԵՍ

«ԻՐԱՆԻՆՔ»-ԻՆ ԵՐԿՏՈՂ ՄՐԸ ԱՆ

Ա՛լ ստակելիք չունի կազկանձիւնը եւոյ ջանի մը ատոյծով «Իրաւունք»-ի խմբագիրը թուրքի տեղատարափին տակ՝ երեսին կաշին բարակնալով ամշնալէ՞ն թէ ճակտին ուղուելիք նորանոր հար-

Այն տեղը ուր ուրիշ ատեն Գանուբի հարստ ալիքները կը կապուտնային, հիմա ձերմակ դաշտի փոխուած էր, որ դէպի հարաւ կը վերջանար բարձր եզերքներով, ուր ազոտները կը կոկոսային, իսկ դէպի հիւսիս Ռուսական կանաչ անվերջ դաշտավայրերուն կը խառնուէր, Փոխանակ չոգինաւներու ու մակոյղներու որոնք ուրիշ ատեն Գանուբի անձայն ալիքները ծալ-ծալ կընէին անընդհատ երթեւեկութեամբ, հիմակ բնութեան ձեռքով կառուցուած կամուրջէ մը, սայլեր, կառքեր կը ճոճային, ճամբորդներ կը սեւնային, որոնք անվարկէն, գետի քարացած ու անդգայ մակուրեւոյթէն, կուգային կանցնէին մէկ ափէն միւսը : Բայց երեսէն մէկը մը խոր, իրենց յատակը, շառաջաձայն, սեւ ու կատաղի ալիքներ կը սլանային : Ինչպէս հոգեւոր անգուսպ ալիկոծութիւնը՝ պաղարիւն դէմքով մը սքողուած : Թրքական ափին վրայ, մօտ հեռաւորութեամբ, փոքր փայտեայ հիւղակներ կը սեւնային, որոնք ձիւնի ձերմակ պատանքով ծածկուած ամայի ու մերկ սարածութեան վրայ գերեզմաններու պէս կերեւային : Բայց գիշերներ՝ փոքրիկ խորոյկներով զուարթօրէն կը փոփոզէին եւ ուռմանակն ափունքին վրայ կիսախաւսրի մէջ թափառող ճամբորդի մը նաւուածքը բռնի իրենց կը քաշէին :

ուածներու վախէն՝ «եւրէնները» իջեցուցած և իր պարտութիւնը շունեցած վեհանձնութիւնով մը սքողուած՝ տղայական խեղդ ու խելառ պառնալիքով մը կուգէ վերջակէտը գնել այն բանակաւորն, ուր արդէն իր մտքին և սրտին բոլոր ազդեցութիւններովը իհանգէս եկաւ : Ու այն՝ նոր յայտնութիւններ պիտի ընեմ յայտարարելով «ձեզի հետ ա՛լ հրապարակով կը տեսնուինք» բռնի յետոյ, որով իր ստախոսութիւններուն վրայ հատ մըն ալ կը բարգէր, կը կռէ ու կը կոփէ օղակ մըն ալ այն շղթային, որով օր մը — որ շատ հեռի շերտի — պիտի կապեն զինքը հանրութեան բարոյականը ազատութիւն չեզոքացնելու համար : «Իրաւունք»-ի մարդուկը կը կարծէ վիրաւորել մեզ՝ տղայ անուանելով : Մե՞ք աղայ, մե՞ք՝ տարեկից ընկերները այն երիտասարդին որ դուք դեռ երեկ Ս. Պ. վարժարանի հոգաբարձութեան թիկնածու կը ներկայացնէիք և որուն ընտրութիւնը ձեր ու երիտասարդութեան յաղթանակը հուշակցիք : Եթէ կընդունիք այնքան ապուշեղած ըլլալ որ վարժարանի մատակարարութիւնը 12 տարեկան տղաներու ուզած էք յանձնել, այն ատեն «փէս» կըսենք ձեզի :

Այս այսպէս. բայց ի՞նչ ըսենք ձեր սա անիմաստ սպառնալիքին թէ՛ գիտէք եղբր մեզ զգաստացուցիչ դասը տալ, առանց պատասխանել զիջանելու : Այս որքան ապուշ, այնքան պարապ սպառնալիքով կուգէք վախցնել մեզ, գացէք ուրիշին հասկցու-

Այդ գիշերային թափառող Մաքսանքին էր : Մաքսանքի ծպտուած էր հիմակ, ձիւղ գիւղացիի պէս հագուած էր կուկլայով ու մոլորական ոչխարի մորթով : Միակ բանը, որ զինքը բուն գիւղացիէն կը զատէր, բէլօվէրն էր, զոր փորձառու ձեռք մը կրնար գիւրաւ կոնակի մորթի ստակէն դոյժածել : Ժամը ինը կամ տասն էր, Սառնաչուէն քամին ամսյութեան մէջ կը փչէր : Մաքսանքին ափին մօտ անշարժ կանգնած էր, աչքը պահպաններուն կարմիր խորոյկներուն յառած կը նայէր : Տեսնողը այնպէս պիտի կարծէր որ իր պահակավայրին վրայ սառած զինուոր մըն է : Մէկէն այդ անշարժ պատկերը երեքայ ու աննշմարելի մթութեան մէջ գէպի Գանուբ յատաջացաւ : Գետափի շատ թեթեւ գոտիներին իջաւ, զոյճ ու համր քայլերով սկսաւ կոխել սառի անհասարակ ու խորը որբի մակերեւոյթին վրայ, կրթնելով իր սրածայր փայտին : Ոչինչ այնչափ ստակալի, խորհրդաւոր ու չարազուշակ էր, քան այդ սեւ ստուերը որ կէս գիշերին, ուրուականի շման կը շրջէր քնայող ու անյատակ խորութեան վրայէն : Մաքսանքին ստանց շեղելու ուղի կերթար :

ցէք : Փախուտի, խուճապի այս ձեւը, ուր պարզօրէն կերեւայ խմբագրի մը՝ անվայել ձեր անարդ վարմունքին համար՝ ձեր իսկ զգացած զղջումին յայտարար նշանները — հոգ չէ որքան քուզարկուած ըլլայ — մեզ չէք կարող կլլեցնել :

Հիմա, ամենէն վերջը, ասիկա պիտոյց և զէք, մարդուկ որ, աչ ու ձախ աղաւյն նետողը օր մըն ալ անանկ ոսկորի մը կը հանդիպի, որ ճղակտոր կը հանէ խաճան շունին ծնորը, և համոզուեցէք գոնէ այս անգամ թէ ասոր անոր պատուին հետ խաղալը աշխարհի ամենէն զղուելի տխրութիւնն է :

Կր փակեմ գրութիւնս. բայց ոչ իմ ու ընկերներուս պատիւը պաշտպանելու համար ձեզ գէմ մղած պայքարս : Հոգ մի ընէք կռիւէ փախչողներէն չեմ :

Կ. Շարախուսանց

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պօլսոյ մէջ ժանտախտի նորանոր դէպքեր հետզհետէ կը յայտնուին, հետեւաբար քարանդիւնները սկսած են առլէ խստութեամբ գործադրուել : Կալաթի և ոսկեղջիւրի կողմը երկու դէպք պատահեր է, որով եօթի հասած է վարակեալներուն թիւը : Պալաթի վարակեալներէն մին մեռեր է : Կառավարութիւնը բժշկական այցելութեան պիտի ենթարկէ Պոլսէն թուրք նաւահանգիստները մեկնող բոլոր նաւերը : — Հին Սերպիոյ և մանաւանդ

Րովիճաի մէջ Սերպիոյցիներու ճշմարիտ չարք մը տեղի ունեցեր է ալպանացի պաշտպանութեան և թուրք ոստիկանութեան ձեռքով : Բօլաշինի մէջ եկեղեցի մը և դպրոց մը և Կազանիքոյի մէջ վանք մը ամբողջովին թալուեցր է : Սերպիոյ Ալէքսանտր թագաւորը իսկոյն իր քովը կանչեր է Պիկրատի թուրք գեսպանը և պնդեր է որ Սուլթանին պէտք եղած սեղեկութիւնները տայ ու պայն ստիպէ այս անհանգործելի կացութեան վերջ մը տալու, որուն մասին Պօլսոյ սերպիական գեսպան Կրուիչ արդէն այնքան ուժգնօրէն բողբած էր, իրենց ձայնակից ունենալով Ռուսիան : Հիմա տեղոյն միւթէսարիքը, ձէմալ պէյ, նոյնիսկ սերպ հիւպատոսներու վրայ սկսած է յարձակիլ :

Թէեւ Սուլթանը հանդիսաւորապէս խօսք տուեր է Կ. Պօլսոյ սերպիական գեսպան Կրուիչին, այս անկարգութեանց վերջ մը տալու, բայց շարգերն ու կողպուտները կրկին կը շարունակուին մահամտականներու կողմէ քրիստոնէից պէս :

— Սուլթանը հրովարտակով մը արգիլեր է իսլամ ընտանիքներուն ասկէ ետքը իրենց հարէմներուն մէջ եւրոպացի դաստիարակուհիներ պահել : Ոստիկանութիւնը պիտի հսկէ այս նոր տեսակէ կեղքիչ հրահանգին գործադրութեան :

— Ժանտախտի նոր դէպք մը պատահեր է Թոփհանէի մէջ և երկու ուրիշ դէպք ալ Թուլա (՝) ըսուած տեղը, Պօլսէն երկու ժամ հեռաւորութեամբ : Առողջապա-

իր առջեւէն եւ մտայն անդուտը մըն էր որ կը բացուէր իր քայլերուն տոջիւ : Իր թափանցող նայուածքը թէ ձախ թէ ալ նուազ, բայց ձիւնի սպիտակութեան մէջէն որ թեթեւ փոշիով մը կը ծածկէր Գանուբի կեղեւը, սեւ գիծը անվերջ կը տարածուէր ու կը մթնէր : Մայրը փնտռելը խելացութիւն չէր : Մաքսանքին քանի մը վարկեան անվճարականութեան մէջ մնաց, Գիշերային քամին իր երեսը կը խայթէր, բայց ալ չէր զգար : Յուսկ յետոյ ետ գտնուելով, արագ ու վճարական քայլերով սկսաւ քայլել : Երեսի ներշնչում մը եկաւ իրեն : Ուղղակի ուռմանակն ափը շտկուեցաւ, ուր ամայի ու փայտաշէն հիւղակ մը կերեւար : Շուտով ափը ելաւ ու հիւղակին մօտեցաւ, իր բիւրը ձգեց եւ սկսաւ ուժով շփել ձեռքերը տաքնալու համար, յետոյ ձեռքը տանիքին երկնցուց, սախտակ մը բռնեց, քաշեց ու տեղէն շարժեց եւ վեր վերցուց : Տախտակը սուր ու ծակող ճաթտոց մը հանեց, եւ նոյն վայրկեանին ալ հիւղակի դուռ բացուեցաւ :

Թարգ. Պ. ՍԻՐԷՄՃԵԱՆ

(Շարունակելի)

հական ժողովը խիստ միջոցներ ձեռք առեր է մայրաքաղաքին մուկերուն դեմ, որոնց մէջ համաճարակը սաստկուպէս կր տարածուի :

— Մեծ իշխան Ա. Միխայելովիչ մտադրութիւն ունի եղեր անցեալ ուրբաթ կամ շաբաթ օր այցելել Պոլիս Սուլթանին և իր ճամբորդութիւնը շարունակել մինչև Բուենաստան, Միջերկրականի և Ագրիականի երկիրները :

— Նոր միջադէպ մը տեղի ունեցեր է Թուրքիոյ և Սերպիոյ միջև. Մակեդոնական սահմանալիսն վրայ, Քիպէֆճէի մէջ Պելկրատի արտաքին գործոց նախարարութեան սուրհանդակներէն մին, որ Հին Սերպիոյ իր հիւպատոսներուն յանձնելի գիւնագիրտական թուղթեր կը փոխադրէր, սահմանալիսին վրայ թուրք պաշտօնեաներէն արգիլուեր է, թէև կանոնաւոր անցագիր ալ կը կրէր և ստիպուեր է Պելկրատ վերադառնալ :

Արաքին գործոց նախարար Վուիչ անմիջապէս հեռագրեր է իր Պոլսոյ ներկայացուցիչին այս դէպքն ալ աւելցնել իր ծանուցագրին մէջ և ուժգնօրէն բողոքել, իրեն նեցուկ ունենալով ռուսական դեսպանը և Բուենաց պատրիարքը, և պառնալով ճշնչողական միջոցներու գիմելու :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Նախարարապետ Քարապէտով օգոստոսի վերջը Սոպրանիէն կարճ նստի մը պիտի հրաւիրէ Բարիզի մէջ վերջերս յաջողութեամբ կնքուած փոխառութեան խնդիրը անոր հասնութեան ենթարկելու համար : Այս փոխառութիւնը 100 միլիոն ֆր. անուանական արժէք մը պիտի ունենայ և իբր երաշխաւորութիւն պիտի տրուի ծխախոտի մենաշնորհը :

— Իշխան Ֆէրիտիանա խիստ մտաւորապէս Բեթերպուրի պիտի երթայ, փոխարինելու համար Մեծ իշխանին այցելութիւնը, բայց չի կարծուիր որ Մօնթէնէկրօի Քէնիա իշխանուհիին կամ ուրիշ ու է օրթոտոքս իշխանուհիի հետ ամուսնանայ ցորչափ իր մայրը, իշխանուհի Քլէմանդին ողջ է :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Կուր կը շարունակուի Բրէթօրիայի շուրջը հաղուողէպ կատաղութեամբ : Օրանսի մէջ ալ նոյն պատերազմական վիճակը կը տիրէ, թէև անգլ. թերթերը լաւատես հեռագիրներ կը տեղացնեն, աշխատելով հետզհետէ խաղաղութիւնը յառաջացած ցուցնել :

— Լօրտ Քիչնէր կը հեռագրէ թէ Շարլ Պօթա և երկու ուրիշ սպաներ Օրանսի մէջ գերի բռնուեր են :

Ի Տ Ա Լ Ի Ա

Պործագուներ անհամեմատելի արագութեամբ կածին Իտալիոյ մէջ, Հողագործական գործադուները հազիւ քիչ մը հանդարտած՝ ձեռարուեստի գործադուները սկսան յաճախել : Միլանի ծխախոտի գործարանէն 1200 բանուորներ անցեալ շաբթու աշխատութիւնն ձգեր են, Ֆլորանսի և Թուրինի բանուորներն ալ հեռագրած են թէ՛ համերաշխութեան համար իրենք ալ Մելանի իրենց ընկերներուն օրինակին պիտի հետեւին :

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Մ. Ի. Ա. Միխայելովիչ Քէօսթէնճէի մէջ ընդունուեր է գահաժառանգ իշխան Ֆէրիտիանայի և տեղական իշխանութեանց կողմէ մեծ պատուով : Մեծ իշխանն ու գահաժառանգը ներկայ եղեր են երկրորդ զօրախմբին զինուորական հանդէսներուն և զօրանոցները այցելեր են : Քէօսթէնճէ քաղաքը դրօշազարդուած էր և հսկայ ամբոխ մը կար : «Րօսթիւլաֆ»ի մէջ հացկերոյթ մը տրուեր է ի պատիւ գահաժառանգ իշխանին : Մեծ իշխանը կենացներ պարպեր է Ռումանիոյ արքայական զոյգին, գահաժառանգին, ռումէն բանակին և ծովայիններուն անունով : Գահաժառանգ իշխանը փոխադարձ կենացներ առաջարկեր է, երեկոյին շքեղ լուսավառութիւն մը կատարուեր է :

Մեծ իշխանը անկից անցեր է Տրապիզոն ուր քիչ մը մնալէ ետքը կրկին պիտի վերադառնայ Օտէսոս :

Չ Ի Ն Ա Ս Տ Ա Ն

Վերջերս Չինաստանէն շատ անհանգստացուցիչ լուրեր եկած են երկրին վիճակին և զօրքերուն մեկնելէն ետքը ստալ գալիք խառնակութեանց մասին : Մասնաւորապէս կաթոլիկ միսիօնարները շատ տխուր գէպքերու պատմութիւններ կը հաղորդեն :

Եւ սակայն գերմանական թերթերը, որոնք ներշնչուած կերելին, կը շանան հանդարտեցնել հասարակաց կարծիքը յայտարարով որ խաղաղութեան կնքումը ձգձգող բոլոր պատճառները հարթուած են այլևս, իրաւ ալ ձառն ետ քաշեր է իր առաջարկը, որով իրեն համար որոշուած գանձելի տուգանքի գումարին յաւելումը կը պահանջէր : Կը մնայ միայն Ռուսիոյ և Անգլիոյ մէջ անհամաձայնութիւն մը ծովային տուրքերու մասին :

— Փէքինի մէջ երկու քօլէրաի դէպք տեղի ունեցեր է ֆրանսական դեսպանատունէն, խիստ միջոցներ ձեռք առնուեր են համաճարակի տարածուիլը արգիլելու համար : Բնակիչները մաքրութեան բնաւ հոգ չեն տանիր, քաղաքին իշխանութիւնը չինացուց յանձնուելէն ի վեր : Նմանապէս անկարգութիւնները շատցած են :

— Թիէնձինի ամբերիկեան հիւպատոսը չորս տարուան բանտարկութեան դատապարտեր է երեք ամերիկացիներ, որոնք Փէքինի մօտ գիւղ մը կողպատելու ատեն չինացիներու կողմէ ձերբակալուած էին :

— Լի Հունկ Չանկ գեսպաններուն ստիպողական խնդրագրեր ուղարկած է, աղաչելով որ փութան իրեն ներկայացնել ամբողջական ծրագիր մը իրենց գաշնագրութեան : Դիտել տուած է թէ Չինաստան տրամադիր է ընդունելու բոլոր բանաւոր պայմանները, բայց անհամբեր կուզէ գիտնալ վերջնականապէս ինչ որ պետութիւնները կը պահանջեն իրմէ, որպէս զի ինքն ալ սկսի իր ստանձնած պարտականութիւնները կատարել :

— Փէքինի մէջ յատկապէս դեսպանատուններուն համար շինուելիք թաղի մը մասին չին կառավարութեան հետ բացուած բանակցութիւնները վերջապէս գրական արգիւնքի մը հասեր են թէև մեծ դժուարութիւններով :

Չինացիք նախ պահանջեր են որ, այդ թաղին մէջ գտնուած բոլոր տաճարները նորոգուին և իրենց յանձնուին, յետոյ թաղէն արտաքսուելիք չին մասնաւորներու սեփականութեանց փոխարժէքը վճարուի ոչ թէ չին կառավարութեան, այլ պետութեանց կողմէ :

Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

«Պէրլինէր Թակէպլաթ» կառավարիկէ որ, բանակին մէջ բոլոր նական շարժումին առաջին անգամ համար նոր օրէնք մը հաստատուի, սրով երրորդ տարուան զինուորական ծառայութիւն պարտաւոր ըլլան ընելու անոնք, որոնք գերմաներէն լեզուին բաւականաչափ ծանօթութիւն չունին : Ազատական թերթերը կը սեն թէ ատանկ առաջարկ մը չի կրնար Քայլաթակի մէջ մեծամասնութիւն գտնել, պահպանողականները, ընդհակառակը կը հաւնին այս առաջարկին :

— Գերման կարող վիպասաններէն Օսկար Պանիձա որ մեծ ազմուկ հանած էր իր բնապաշտ վէպերով, 12 ամսուան բանտարկութեան դատապարտուած է, իր գրութիւններէն մէկուն մէջ արքայական ընտանիքին վրայ յարձակած ըլլալուն համար :

Սակայն, երկրորդ դատարան մը, որուն դիմած էր ամբաստանեալին փաստաբանը, վիպասանը ընդուներ է իբրև իր մտաւոր կարողութեանց լիապէս տիրանալու անկարող մէկը, և զայն փակել է յիմարաբուժական հաստատութեան մը մէջ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Փօնթ Լէօն Թօլսթօ ծանրապէս հիւանդ է եղեր : Սաստիկ յերմէ կը տառապի : «Տէլի» նիւլոի ստացած հեռագրին համեմատ, բժիշկները յայտարարած են թէ Թօլսթօի առողջական վիճակը կատարելապէս յուսահատական է :

— Մոսկուայէն կը գրեն թէ կեդրոնական Ռուսիոյ մէջ սաստիկ տաքութիւն մը կը տիրէ, ջերմութեան ստոյգանը 55—60 րէօմիտրի կը հասնի եղեր արեւին մէջ, 7 արեւահարներ մէկ օրուան մէջ մեռեր են : Օտէսայի մէջ գործառնութիւնները ամբողջովին դադար են այս սիրող արտակարգ տաքութեան պատճառաւ :

Մ. Ն Ա Ն Ա Ն Կ

Տաքը և երաշտութիւնը սուկալի պատճառաւ մը ըլլալ կը սպառնան Ամբերիկայի համար : Բացի տաքէն մեռնողներու բազմութենէն, որոնց թիւը հազարի մօտեցած է մինչև այսօր, երաշտութիւնը ահագին աւերումներ կը գործէ :

Թեքսասի Նահանգին մէջ փոչոցները ջրելու համար ստիպուեր են իւր գործածել ջուրի չղոյուութեան պատճառաւ : Միսուրիի կառավարիչը հրամայեր է բոլոր եկեղեցիներուն և ժողովարաններուն մէջ հասարակաց աղօթքներ կատարել երաշտութենէ ապաստելու համար :

Ա Չ Դ

Ռումանիոյ Քէօսթէնճէ քաղաքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ համար կը խնդրուի վկայեալ երաժիշտ դասատու մը, որ ունենայ ախորժալուր ձայն, պարկեշտ եւ բարի վարք : 25—30 տարիքով, և միանգամայն կարող Ազգ. վարժարանի մէջ երկրորդական դասեր աւանդելու : Գոհացուցիչ ամսական. մանրամասն սեղեկութեանց համար փափաքողք կանխաւ կարող են գիմել հետեւեալ հասցէին :

M. Ilie M. Grigorian Tipographe Roumanie Constanta

Отговорникъ : Д-ръ МѢГЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. Взаимность. — Верна.